Տ. ՂՈՒԿԱՍ ԱԲԵՂԱ ՋԱՔԱՐՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ

Սույն թվականի սեպտեմբերի 1-ից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Տ. Ղուկաս աբեղա Ջաքարյանը, ավարտելով բարձրագույն ուսումնառությունը Հռոմում, նշանակվել է Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի տնօրեն:

* * *

Տ. Ղուկաս աբեղա Ջաքարյանը ծնվել է 1973 թ. նոյեմբերի 9-ին Երևանում:

1980-1988 թթ. սովորել է Երևանի թիվ 52 միջնակարգ դպրոցում:

1988-1990 թթ. ուսումը շարունակել է հայագիտական թեքումով Երևանի թիվ 10 դպրոցում:

1990-1997 թթ. ընդունվել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

1993-1994 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում:

1996 թ. դեկտեմբերի 24-ին ստացել է սարկավագական աստիճան՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1997-2000 թթ. պաշտոնավարել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի հրատարակչական բաժնում, լինելով և կրոնի ուսուցիչների վերապատրաստման լսարանների դասախոս: 2000 թ. ձեռամբ Երջանկահիշատակ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի ստացել է քահանայական աստիճան:

2000-2002 թթ. եղել է Ս. Գեղարդա վանքի վանահայրը:

2002-2005 թթ. ուսանել է Հռոմի Արևելյան Պոնտիֆիկալ Ինստիտուտի կանոնագիտության ֆակուլտետում, որտեղ պաշտպանել է գիտական թեզ՝ «Բարձրագույն իշխանությունը Հայ Եկեղեցում (մինչև V դար)» թեմայով, և ստացել կանոնագիտության մագիստրոսի աստիճան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ